ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

# ՈՐՈՇՈՒՄ

№2025-7-4-Ա

ք. Երևան 01.10.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հոկտեմբերի 1-ի նիստում քննարկեց 2024 թվականի սեպտեմբերի 16-ին լիազորված անձ Թ. Փոքրիկյանի կողմից ներկայացված՝ «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Արարատի մարզ, 0802, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան փողոց 10, AM) «Master» (No20232017) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում 34-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «MASTER BLUE EDITION», «MASTER», «MASTER BLACK EDITION», «M MASTER Slims», «MASTER Nero», «MASTER Argento», «IMT MASTER» («Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ք. Մասիս, Արդյունաբերական հանգույց, Գործարանային 10 AM, N 23452, 11.09.2015թ., N 23453, 11.09.2015թ., N 23454, 11.09.2015թ., N 23455, 11.09.2015թ., N 23456, 11.09.2015թ., N 24674, 08.07.2016թ., N 26675, 10.11.2017թ., N 27501, 14.06.2018թ., N 27402, 23.05.2018թ., N 28956, 29.05.2019թ.) բառային և համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 130-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են համարվել համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Համակցված

ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված, եթե դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների՝ այսպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանները զուգորդվում են իրենց «MASTER» գրառումներով:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ: Հաշվի է առնվել նոր ի հայտ եկած հանգամանքը, այն է՝ հակադրված ապրանքային նշանների իրավատիրոջ հասցեի փոփոխության արդյունքում հակադրված ապրանքային նշանների իրավատերը և մերժված ապրանքային նշանի հայտատուն նույնացվել են:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Բողոքարկողի ներկայացուցիչը ևս համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

## Ո Ր Ո Շ Ե Ց

Լիազորված անձ Թ. Փոքրիկյանի կողմից ներկայացված «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ընկերության «Master» (No20232017) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ